

ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



Ձեռքբերումները՝ իրականացվող ծրագրերի արդյունք

ՀՀ գյուղատնտեսության նախարարն աշխատանքային այց է կատարել Լոռու մարզ: Նախարարի առաջին կանգառը Սարամեջ համայնքում էր, որտեղ հանդիպել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (CARMAC) ծրագրի շրջանակներում ստեղծված կոոպերատիվի անդամների հետ:

Նախարարին ուղեկցում էր նաև Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը: Այստեղ նախարարին տեղեկացրել են, որ ծրագրի շնորհիվ լուծվում է արոտների ջրաբեկացման խնդիրը, կոոպերատիվին վերջերս տրամադրվել է նաև բելառուսական արտադրության նոր տրակտոր, շարքացան, կուլտիվատոր և այլ գյուղատեխնիկա, ինչն էապես կհեշտացնի գյուղատնտեսական աշխատանքները: Տեղեկանալով, որ կոոպերատիվի խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը կազմում է 470 գլուխ, նախարարը վստահություն է հայտնել, որ ծրագրի շնորհիվ հնարավոր կդառնա ոչ միայն ավելացնել կենդանիների գլխաքանակը, այլև՝ բարձրացնել մթերատվությունն ու կաթնատվությունը: Նշելով, որ ներկայումս կոոպերատիվի կազմում ընդգրկված է համայնքի 104 գյուղացիական տնտեսություն՝ կոոպերատիվի նախագահ Աղասի Հովհաննիսյանը համոզվում է հայտնել, որ կոոպերատիվի գործունեության արդյունավետության դեպքում այն առաջիկայում կհամարվի նոր անդամներով: Ընդհանուր առմամբ, Լոռու մարզից CARMAC ծրագրի երկու փուլերում ընդգրկվել է մարզի 14 համայնք, որոնցում հիմնադրվել են «Համայնքի արոտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, համայնքների մի մասում ավարտվել են արոտավայրերի ջրաբեկացման համակարգերի շինարարական աշխատանքները, տրամադրվել է 57 միավոր գյուղատեխնիկա:

Այնուհետև նախարարն ուղևորվել է «Սպիտակի թռչնաֆաբրիկա» ՍՊԸ՝ արտադրության տեխնոլոգիաներին ու իրականացվող նոր ծրագրերին տեղում ծանոթանալու նպատակով: Նախարարը շրջել է ֆաբրիկայում, ծանոթացել ընկերության գործունեությանը: 2015 թվականին ընկերությունում արտադրվել է շուրջ 600 տոննա թռչնամիս, իսկ 2016 թվականի 4 ամիսներին՝ 180 տոննա: Թռչնամիս արտադրության ծավալներն առաջիկայում նախատեսվում է հասցնել 2400

5 2

Նոր սորտեր գիտական կենտրոնում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է ՀՀ ԳԱ «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ՝ կենտրոնի գործունեությանն ու ընթացիկ աշխատանքներին տեղում ծանոթանալու նպատակով:

Այցելության սկզբում նախարարը, «Շիրանի գենետիկական ռեսուրսների պահպանում և օգտագործում» ծրագրի շրջանակներում, եղել է 2012 թվականին հիմնված Շիրանի կոլեկցիոն այգում, որտեղ պահպանվում են հայկական ծիրանենու 82 գենետիկ սորտեր: «Այս այգին հիմնվել է ծիրանենու տեղական ռեսուրսների պահպանման, մշակության զարգացման և մեր սերունդներին փոխանցելու նպատակով: Միաժամանակ սելեկցիայի արդյունքում անհրաժեշտ է ստանալ նոր ցրտադիմացկուն և ուշահաս սորտեր», - նշել է Սերգո Կարապետյանը:

Նախարարը նաև հավելել է, որ ներկրվել են եվրոպական լավագույն սորտեր և նախատեսվում է ստեղծել տնկարանային տնտեսություն՝ հետագայում պատվաստումներ կատարելու և լավագույն սորտերը գյուղացիական տնտեսություններին վաճառելու համար: Տեղեկացնելով, որ այս տարի կենտրոնում հիմնվել է նաև խաղողի կոլեկցիոն այգի, որտեղ մշակվելու են տեղական սեղանի և տեխնիկական սորտեր՝ նախարարը նշել է, որ Հայաստանում գոյություն ունի տեղական խաղողի ավելի քան 600 սորտ, որոնց միայն մի մասն է դեռ ներկայացված այգում. հավաքագրման գործընթացը շարունակվում է: Արտասահմանից ներկրված խաղողի տնկիների միջոցով այստեղ հիմնվելու է նաև ֆիլոքսերագերծ տնկարանային տնտեսություն:

Ծանոթանալով կենտրոնի ընթացիկ աշխատանքներին՝ նախարարը տվել է հանձնարարականներ՝ աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է Գերմանիայի բնության պահպանության միության նախագահ Օլաֆ Զիմպերի գլխավորած գերմանական գործարարների պատվիրակությանը:

Վարչապետը կարևորել է Գերմանիայի հետ տնտեսական հարաբերությունների զարգացումն ու բնապահպանության ոլորտում արդյունավետ համագործակցությունը: Հովիկ Աբրահամյանը նշել է, որ Հայաստանը շնորհակալ է գերմանական կողմին՝ մեր երկրի շրջակա միջավայրի պահպանման, անտառային տարածքների վերականգնման և բնապահպանական բազմաթիվ ծրագրերի իրականացման օժանդակելու համար:

Գերմանիայի բնության պահպանության միության նախագահ Օլաֆ Զիմպերն և ՀՀ-ում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Մաթիաս Զիսլերը շնորհակալություն են հայտնել վարչապետին ընդունելության համար և բարձր գնահատել հայ-գերմանական փոխգործակցությունը, այդ թվում՝ բնապահպանության ոլորտում: Օլաֆ Զիմպերն նշել է, որ իր գլխավորած պատվիրակության կազմում գտնվող գործարարների նպատակն է՝ նոր կապեր հաստատել հայ գործընկերների հետ, իրականացնել ներդրումային ծրագրեր:

Վարչապետ Աբրահամյանը ողջունել է գերմանացի գործարարների նախաձեռնությունը և նշել, որ տնտեսության տարբեր ճյուղերում Հայաստանն ունի հեռանկարային ծրագրերի իրականացման լավ հնարավորություններ, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակում:

Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի ղեկավար խորհրդի հերթական նիստը:

Խորհուրդը հավանություն է տվել «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի շրջանակում իրականացվող Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Շիրակի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համայնքների ջրամատակարարման համակարգերի և Սյունիքի մարզի, ընդհանուր առմամբ, 31 համայնքների ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցման համար հայտարարված միջազգային մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշմանը:

Զննարկվել է հաստատվել է վերը նշված ծրագրի շրջանակում Արագածոտնի, Լոռու և Տավուշի մարզերում 2016-2017 թթ. Ջրամատակարարման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության, Սյունիքի, Վայոց ձորի և Շիրակի մարզերում 2016-2017թթ. ջրամատակարարման համակարգերի վերակառուցման շինաշխատանքների տեխնիկական հսկողության և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցման ծրագրերի իրականացման համար անցկացված մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումը:

Որոշվել է «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» (ԵԳՖԱԾ) ծրագրի շրջանակում 2016-2017 թթ. իրականացվելիք համայնքային ջրամատակարարման և ոռոգման համակարգերի վերակառուցման աշխատանքների ցանկում ներառել Հոռոմ, Ծովինար, Վարդենիկ և Նորատուս համայնքները:

Հաստատվել է «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի՝ «Բաղադրիչ 4 Գյուղական ֆինանսավորում (Այգեգործական վարկեր)» ենթաբաղադրիչի շրջանակներում «Տեխնիկական աջակցություն» ծրագիրը:

Արտադրություն	Էջ 3
Կոոպերացիա	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 6

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՆԳԱՄ ԿԱՐՈՂ Է ԴՐԱԿԱՆ ԼՈՒՐՁ ՏԵՂԱՇԱՐԺ ԱՌԱՋԱՑՆԵԼ

Կենսահումուսը օրգանական պարարտանյութ է, որը հարուստ է բույսերի համար անհրաժեշտ սննդամթերք նյութերով: Այն զգալիորեն մեղմացնում է բույսերի սթրեսային վիճակը, նպաստում սերմերի ծլարձակմանը, սածիլների կայունությանը՝ միաժամանակ բարձրացնելով բույսերի դիմադրողականությունը հիվանդությունների նկատմամբ:



Կենսահումուսն արագացնում է բույսի աճն ու զարգացումը, նպաստում պտղի վաղ հասունացմանն ու երկարաժամկետ պահպանմանը՝ բարելավվելով բերքի որակը: Ասվածի ճշգրտության մեջ համոզվում են՝ այցելելով Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքում գործող Վանիկ Ստեփանյանի այգեգործական տնտեսություն:

Արդեն մի քանի տարի է, ինչ Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքում ֆերմեր Վանիկ Ստեփանյանն իր այգետարածքներում ոչ միայն կիրառում է կենսահումուս, այլև կազմակերպում է վերջինիս արտադրությունը: Ֆերմերն այսօր ստեղծել է ցուցադրական այգի: Կիրառվող գյուղատնտեսական նորարարությունների ու տեխնոլոգիաների շնորհիվ ստեղծվել է ոչ միայն գեղեցիկ ու աչք շոյող այգի, այլև վերջինիս փորձը ուսանելի է նաև հարևանությամբ բնակվող այգետերերի համար: Փորձը ցույց է տալիս, որ այն տնտեսություններում, որոնք հետևում են ֆերմերի օրինակին՝ կիրառելով նրա մասնագիտական ցուցումներն ու խորհուրդները, մեծանում է տնտեսական արդյունավետությունը: Այսօր հանրապետությունում հայտնի է Ձորաղբյուրի մրգի համբավը: Այն շուկայում մեծ պահանջարկ է վայելում ոչ միայն ապրանքային տեսքի, այլև՝ համային հատկանիշների շնորհիվ:

«Կենսահումուսն իրենից ներկայացնում է հավասարակշիռ ու զուգակցված սննդարար նյութերի մի ամբողջ համալիր՝ բաղկացած մակրո և միկրո տարրերից, ֆերմենտներից, հողային հակամանրէներից, վիտամիններից, բույսերի աճն ու զարգացումը խթանող հորմոններից: Դրա կազմում մեծ քանակությամբ հումինային նյութեր կան: Այն նաև միկրոկենսաբանական պարարտանյութ է: Դրա մեջ եզակի համակցությամբ միկրոօրգանիզմներ են բնակվում, որոնցով բարելավվում է հողի բերրությունը», - ասում է պրն. Ստեփանյանը: Ի դեպ, կենսահումուսը չունի աղտածին միկրոֆլորա, որդերի ձվեր, հասարակ աղտածին թաղանթապատյաններ, բրածո ճանճերի թրթուրներ, մոլախոտերի սերմեր: Այս պարարտանյութը հեշտությամբ և աստիճանաբար իրացվում է բույսերի կողմից իր զարգացման ողջ փուլի ընթացքում:

«Ուշագրավն այն է, որ կենսահումուսը հանդիսանում է օրգանական պարարտանյութ բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի տնկման, սնուցման, աճի, ինչպես նաև հողի վերակենդանացման և վերամշակման ժամանակ», - հավելում է ֆերմերը: Վանիկ Ստեփանյանը միաժամանակ աշխատում է ՀՀ Կոտայքի մարզի ԳԱՄԿ-ում՝ որպես խորհրդատու գյուղատնտես: Նրա կարծիքով՝ շատ կարևոր է կենսահումուսի օգտագործման կարգի պահպանումը: «Պետք է ճիշտ պահպանել օգտագործման ժամկետները, չափաբաժինները՝ հաշվի առնելով մշակաբույսի տեսակն ու առանձնահատկությունները: Կենսահումուսը բնապահպանորեն մաքուր պարարտանյութ է, որի կիրառման դեպքում բարձրանում է տնտեսության արդյունավետությունը», - նշում է փորձառու մասնագետը:

Մասնագիտական խորհուրդներին հետևելն, ինչ խոսք, տալիս է ցանկալի արդյունք, փոքրիկ ներդրումն անգամ դրական լուրջ տեղաշարժ կարող է առաջացնել տնտեսությունում: Կարևորը՝ ցանկությունն է և քայլեր կատարելը:

ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

Հայ-հոլանդական «Բիգա» համալսելի ձեռնարկությունը հիմնադրվել է 2010 թ.-ին: Թեև երկար ճանապարհի չի անցել այս ընկերությունը, սակայն իր յուրօրինակ արտադրանքի շնորհիվ ճանաչում ունի թե՛ հանրապետությունում, և թե՛ արտերկրում: Ընկերության գործադիր տնօրեն Արթուր Տիգրան-



ովքեր ուսուցանում են հայ գյուղատնտեսներին: Ելակի բերքի գերակշռող մասն արտահանվում է, իսկ լոլիկն ամբողջությամբ իրացվում է ներքին շուկայում:

«Բիգա»-ն միաժամանակ զբաղվում է նաև այգեգործությամբ: Արովյանի տարածքում հիմնել են կեռասի այգիներ: Այս տարի սպասվում է առաջի բերքը: Տնկել են զանազան ծառատեսակներ, որոնք սովորաբար տալիս են առատ և խոշորապտուղ բերք, որը մրցունակ է շուկայում: Գոհացուցիչ արդյունքների դեպքում նախատեսել են ընդլայնել կեռասի այգետարածքները: «Արտահանման դեպքում պետք է մեծ քանակություն ապահովել: Բացի այդ, շատ կարևոր է նաև արտադրանքի որակը», - ասում է պրն. Տիգրանյանը, սակայն հավելում, որ Հայաստանում վերջին մի քանի տարիներին, մասնավորապես երիտասարդության կողմից, նկատելի է, որ գնալով մեծանում է հետաքրքրությունը գյուղատնտեսության նկատմամբ:



բազմաճյուղ այս տնտեսության տնտեսական արդյունավետության բարձրացումն է, ինչի շնորհիվ ավելանում է բերքատվությունը:

Երրորդ փուլում ընդլայնվել է սնկի արտադրությունը, քանի որ կազմակերպվում է արտահանում՝ արևելյան և այլ երկրներ: «Հաջորդ քայլը՝ Արովյանի տարածաշրջանի հատապտուղների արտադրության կազմակերպումն էր, քանի որ տարածքի կլիման բարենպաստ էր վերջինիս աճեցման համար: Հատապտուղները (եյակ, մոշ, ազնվամորի) աճեցվում են բաց երկնքի տակ: Այնուհետև կառուցվեց 1 հա ջերմոց, որտեղ հիդրոպոնիկ եղանակով աճեցվում է եյակ: Առայժմ ընթանում են փորձնական աշխատանքներ, քանի որ առաջին անգամ ենք եյակն աճեցնում ջերմոցային պայմաններում: Կարծում են, ճիշտ տեխնոլոգիաների պահպանման դեպքում, որևէ խնդիր չի լինի», - պատմում է տնօրենը:

Ընկերությունն ապահովված է բարձրակարգ գյուղատնտեսներով, ովքեր անում են հնարավոր գիտական գյուղատնտեսության զարգացման համար: Հոլանդական կողմն ապահովում է մասնագիտական խորհրդատվություն: Արտերկրի փորձը ներդնելու և տեղայնացնելու նպատակով, հրավիրում են մասնագետներ,

յանի տեղեկացմամբ, առաջին փուլում կառուցվել է սնկի արտադրամասը, իսկ մեկ տարի անց հիմնվել է հիդրոպոնիկ եղանակով աճեցվող լոլիկի 1 հա ջերմոց: Աճեցնում են չերրի և մեծ պահանջարկ վայելող հայկական ավանդական սորտեր: Երկու տնտեսություններն էլ գործում են ՀՀ Արմավիրի մարզում: Գործադիր տնօրենի տեղեկացմամբ, «Բիգա»-ի առաջնահերթ խնդիրը՝ արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման ճանապարհով,

«Նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում բարձրանում է եկամտաբերությունը, ինչն էլ նպաստում է, որպեսզի գյուղատնտեսությամբ զբաղվելը դառնա գրավիչ և եկամտաբեր: Դրան նպաստում է նաև տնտեսությունների խոշորացումը, արտադրական ծավալների ընդլայնումը: Խոշոր տնտեսությունները միշտ էլ կարող են եկամուտ ունենալ, ստանալ ցածր ինքնարժեքով արտադրանք, իսկ փոքրերը կարող են գոյատևել ընդամենը բավարարելով սեփական կարիքները», - եզրահանգում է պրն. Տիգրանյանը: Գործադիր տնօրենը կարևորում է նաև գյուղացիական տնտեսությունների մասնագիտացումն այս կամ այն մշակաբույսի մշակության ուղղությամբ, ինչպես նաև՝ կոոպերացիայի զարգացումը Հայաստանում: Նրա կարծիքով՝ այս ուղղությամբ հանրապետությունում արդեն տարվել են զգալի աշխատանքներ:

Ընկերությունն աշխատատեղեր է ստեղծում հանրապետության մարզերում՝ նպաստելով գյուղական բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:

Էջի նյութերը՝ Նեյի Սահակյանի

ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ՝ ԶՐԱՄԲԱՐԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

Վերջերս մարզպետը Ռուբիկ Աբրահամյանը հերթական այցով եղել է Ազափի ջրամբարում:

Այցի ընթացքում մարզպետին ուղեկցել են մարզային փրկարարական վարչության պետ Մուրադ Մարգարյանը, համայնքների ու համապատասխան կառույցների ղեկավարներ: Այցի նպատակը՝ ջրամբարի ենթակառուցվածքների և այնտեղից դուրս եկող ջրային հոսքերի կառավարման ուսումնասիրությունն ու ճշգրտումը շրջակա համայնքները հեղեղումներից զերծ պահելու համար: Մարզպետի այցի պահին ջրամբարից Ազատ գետ էր լցվում վայրկյանում 20-22 խ/մ ջուր՝ առաջիկա օրերին խոստանալով գրանցել ջրային հոսքի ավելացում: Ի դեպ, ջրամբարում ջրի առատության նման ցուցանիշ, վերջին տարիների ընթացքում, չէր արձանագրվել:

Այցի ավարտին Արարատի մարզպետը ջրամբարի շրջակա 14 համայնքների ղեկավարների ու մարզային համապատասխան կառույցների ղեկավարների հետ համատեղ քննարկման արդյունքում տվել է համապատասխան հանձնարարականներ՝ աշխատանքների օպտիմալ կազմակերպման ուղղությամբ: Ինչպես նաև մարզի ղեկավարը Արարատի ՄՓՎ պետին հանձնարարել է շուրջօրյա մոնիտորինգ իրականացնել ջրամբարի շրջակայքում և հարակից տարածքներում պարբերական հաճախականությամբ տեղեկացնելով հնարավոր ռիսկերի մասին:

Մինչ այդ, մարզպետարանում կայացել էր խորհրդակցություն, որին մասնակցել են Ազատի ջրամբարի շրջակա 14 համայնքների ղեկավարները: Խորհրդակցության ընթացքում համայնքների ղեկավարներն իրազեկվել են իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև շրջաբերականներ են ուղարկվել նույն այդ համայնքներ: Ըստ շրջաբերականների՝ համայնքների ղեկավարներին հանձնարարվել է բնակիչներին ծանուցել զերծ մնալ Ազատ գետի մոտ անսանապահությամբ և գյուղատնտեսությանը զբաղվելուց, քանի որ այն կարող է հանգեցնել վտանգավոր իրավիճակների: Բացի այդ, հրահանգ է տրվել այդ գոտում տեղադրել համապատասխան գրության մեջ ցուցանակներ հնարավոր արտակարգ իրավիճակները կանխելու համար:

ՓԱՌՍՈՆ

ՏՈՒՄԱՅԻ ԲԱԶՄԱԹԻՎ ՏԵՍԱԿՆԵՐ՝ ՄՈՒՍԱԼԵՌՈՒՄ

«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ-ի նախաձեռնությամբ և Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ, օրերս Մուսալեռան հուշահամալիրում տեղի ունեցավ հանրության շրջանում մեծ ճանաչում գտած «Ուղույի» տոլմայի համահայկական վեցերորդ փառատոնը:

Մուսալեռան հուշահամալիրում բացված 30 տաղավարներում ներկայացված էին հայկական ավանդական ուսուցողական տեսակներ՝ պատրաստված մայրաքաղաքի ռեստորանային տարբեր համալիրների, Արմավիրի մարզի համայնքապետարանների, առանձին կազմակերպությունների և խոհարարների կողմից: Տոլմայի փառատոնն իր շուրջ էր համախմբել մեծ թվով մարդկանց, այդ թվում՝ օտարերկրյա հյուրերի՝ հնարավորություն ընձեռնելով հայկական ավանդական կերակրատեսակը համտեսել ոչ ավանդական միջավայրում:



Փ առ ա տ ո ն ի ն մասնակցել են նաև ՀՀ մշակույթի, էկոնոմիկայի նախարարությունները և Արմավիրի մարզպետարանը:

Գյուղատնտեսության մեջ, սակայն, նրանք վաստակում են 30 %-ով ավելի քիչ, քան տղամարդիկ՝ հիմնականում տեխնոլոգիաների և գիտելիքների պակասի պատճառով, ինչպես նաև ավանդական գյուղատնտեսական գործունեության հետ, որը նպատակաուղղված է հիմնականում սեփական կարիքները հոգալու համար:

Մոնիտորինգի արդյունքում և կազմակերպության նախագահ Սեդրակ Մամուլյանին՝ վստահեցրեց, որ նրանց արդար նախաձեռնությամբ իրականացվող փառատոնի շնորհիվ, հայկական ավանդական տոլման անպայման իր կարևոր և մնայուն տեղը կգտնի ամբողջ աշխարհում:

Մարզպետը փառատոնի մասնակիցներին ցանկացավ արդար պայմաններում մրցակցություն և արժանապատիվ հաղթանակ՝ հույս հայտնելով, որ բոլորը մեծ հաճույք և բավականություն կգան փառատոնի շրջանակներում:

Տոլմայի համահայկական վեցերորդ փառատոնն ուղեկցվեց համերգային ծրագրով և ավարտվեց մրցանակաբաշխությամբ: Մրցանակային տեղեր զբաղեցնելու համար տաղավարները միմյանց հետ մրցում էին «Լավագույն համ», «Լավագույն տեսք» և «Լավագույն մտախղացում» անվանակարգերով: Նշված անվանակարգերում հաղթողները «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ-ի կողմից պագևատրվեցին մեդալներով և պատվոգրերով: Իսկ «Ուղույի» տոլմայի փառատոնի բացարձակ հաղթող ճանաչվեց և ոսկե հուշամեդալով պարգևատրվեց «Կարաս ազգային սննդի ցանցը»:

ԾՐԱԳԻՐ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Վերջերս Տավուշի մարզպետարանում տեղի ունեցավ քննարկում՝ Եվրամիության ֆինանսավորմամբ, ՕԲՍՖԱՍ միջազգային բրիգանական կազմակերպության կողմից Տավուշի մարզում իրականացվող պարենային անվտանգության և կենսապահովման ծրագրի շրջանակներում:



Մասնակցում էին մարզի գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուներ, համայնքների ղեկավարներ, գյուղատնտեսական կոոպերատիվների նախագահներ, ֆերմերային տնտեսությունների ներկայացուցիչներ, ծրագրի շահառուներ: Բացման խոսքով հանդես եկավ Տավուշի մարզպետարանի ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Գուրգեն Հարությունյանը:

Այնուհետև «Տնտեսական արդարություն և պարենային անվտանգություն» ծրագրի ղեկավար Վահիմ Ուզունյանը քննարկման մասնակիցներին մանրամասն ներկայացրեց ծրագրի իրականացման ընթացքը, անդրադարձավ հետագա քայլերի կարևորությանը: Նշվեց, որ ծրագրում առանձնահատուկ կարևորվում են պարենային անվտանգության բաղադրիչները և ներկաների ուշադրությունը իրավիճակի այդ բաղադրիչների վրա: Ծավալված բաց քննարկման ընթացքում հնչեցին նաև կարծիքներ ու առաջարկություններ:

ՆՊԱՏԱԿԸ՝ ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

«Կանաչ արահեղ» ՀԿ-ն ուրախությամբ կարևորում է «Գյուղական կանանց համայնքի տնտեսական հզորացում» կարողությունների զարգացման միջոցով» ծրագիրը, որը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի Կանանց հարցերով զբաղվող գրասենյակի «Գենդերային հավասարության հիմնադրամի» կողմից:

Գենդերային հավասարության հիմնադրաման աջակցում է այնպիսի ծրագրերի, որոնք ավելացնում են կանանց տնտեսական հնարավորությունները կամ քաղաքական մասնակցությունը տեղական և ազգային մակարդակում: «Կանաչ արահեղ» ներկայացրած ծրագրի առաջարկը՝ 24 նախաձեռնությունների թվում էր, որոնք ընտրվել էին 1386 ծրագրային առաջարկներից՝ Հիմնադրամի 2015 թ. դրամաշնորհային շրջափուլում: Բոլոր առաջարկներն ուսումնասիրվել են գենդերային հարցերով անկախ փորձագետների Տեխնիկական Հանձնաժողովի կողմից՝ անցնելով բազմակի փուլերով:

Ընտրված առաջարկներն հաստատվել են ՄԱԿ-ի Կանանց հարցերով զբաղվող գրասենյակի և արտաքին շահագրգիռ կողմերի հանձնաժողովի կողմից, որը բաղկացած է քաղաքացիական հասարակության, կառավարական և մասնավոր սեկտորի ներկայացուցիչներից: «Կանաչ արահեղ» կողմից ներկայացված ծրագրային առաջարկն առանձնանում էր որպես գենդերային հավասարության արդյունավետ խթանման և կանանց հզորացման ու իրավունքների պաշտպանության աջակցության մոդել:

Հայ կանայք նշանակալի դերակատարում ունեն գյուղատնտեսության մեջ, սակայն, նրանք վաստակում են 30 %-ով ավելի քիչ, քան տղամարդիկ՝ հիմնականում տեխնոլոգիաների և գիտելիքների պակասի պատճառով, ինչպես նաև ավանդական գյուղատնտեսական գործունեության հետ, որը նպատակաուղղված է հիմնականում սեփական կարիքները հոգալու համար:

Սոցիալական, մշակութային և տնտեսական մարտահրավերներն իրենց մեջ պարունակում են կանանց շրջանում աղքատություն, գործազրկության և պարենային անպահովության բարձր մակարդակ:

Ծրագրի նպատակն է՝ բարելավել կենսապայմանները և նվազեցնել աղքատության մակարդակը 15 գյուղական համայնքներում՝ ավելացնելով գյուղական կանանց հմտություններն ու կարողությունները՝ կայուն և օրգանական գյուղատնտեսության ոլորտում: Ծրագրում ներգրավված գյուղական կանայք կսովորեն ներդնել ավելի բնական և կլիմայակայուն գյուղատնտեսական պրակտիկա, կբարելավեն իրենց ստացած բերքի քանակն ու որակը և կբարձրացնեն իրենց արտադրանքի մրցունակությունը՝ ապրանքայնությունը ներդնելով նոր մարքեթինգային ուղիներ:

Ծրագիրը նպատակ ունի նաև ուժեղացնելու կանանց դերը համայնքային մակարդակում, որոշումներ կայացնելու գործընթացներում և բարձրացնել տեղական իշխանությունների իրազեկվածության մակարդակը՝ կապված գյուղական կանանց կարիքների և առաջնահերթությունների վերաբերյալ:

«Կանաչ արահեղ»

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ՄԻԱՅՆ ԴՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիք համայնքի արտոգրագործողների սպառողական կոոպերատիվ» իր գործունեությունը սկսել է 2013 թ.-ից՝ 265 անդամով: Գյուղապետ Կարապետ Ասատրյանի տեղեկացմամբ, կոոպերատիվում ընդգրկվել են գյուղի գրեթե բոլոր տնտեսությունները: Նրա կարծիքով, պարզապես դրական այն տեղաշարժերն են, որոնք իր հետքերը կոոպերատիվը:



Կարապետ Ասատրյանը դրական ամենակարևոր տեղաշարժը համարում է գյուղատնտեսական տեխնիկայի նորացումը, որի արդյունքում՝ 40-50 %-ով իջել են կատարվող ծառայությունների գները: Դրա շնորհիվ, 60 %-ով ավելացել են մշակովի հողատարածքները: Գյուղում առկա են 766 հա վարելահողեր, որոնք հիմնականում դրվում են կարտոֆիլի, ցորենի և գարու ցանքի տակ: Ավելանում է նաև անասնազխաքանակը, խոշոր եղջերավոր կենդանիների թիվն արդեն գերազանցում է 1300-ը, մանրիկները՝ 1400-ը: Յուրաքանչյուր տնտեսություն խնամում է 1-5 խոշոր եղջերավոր կենդանի:

Ինչ վերաբերում է կովերի կաթնատվությանը, ապա մինչև կոոպերատիվի ձևավորումը, այն կազմում էր տարեկան 1800-2000 կգ, սակայն արտավայրերի ջրաբեկացումից հետո (տեղադրվել են խմոցներ), կաթնատվությունն աստիճանաբար բարձրանում է: Գյուղում այժմ առկա է անասնազխաքանակի տոհմային հատկանիշների բարելավման, նախիրի բարձր մթերատու կենդանիներով համալրման անհրաժեշտություն:

Ինչ վերաբերում է կաթի մթերմանը, ապա այն մշտապես գնվում է «Թամարա», «Մարիաննա», «Աշտարակ կաթ» և այլ վերամշակող ընկերությունների կողմից: Թերևս, գյուղապետի տեղեկացմամբ, մթերման գները միշտ չէ, որ գոհացնում են գյուղացուն: «Հունիսից կենդանիները սնվում են ամառային արոտավայրերում, որոնք գյուղից գտնվում են 5-15 կմ հեռավորության վրա: Ցավոք, ամառն ամիսներին իջնում է կաթի մթերման գինը: Մինչդեռ գյուղացին, մանավանդ կոոպերատիվի ձևավորումից հետո, նախընտրում է զարգացնել անասնապահությունը, քանի որ դրա համար ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները», - նշում է գյուղապետը:

Գեղարքունիքի գյուղատնտեսական տեխնիկական համալրվել է ևս 13-ով, նույնիսկ ձեռք են բերել կոմբայն, որը բերքահավաքի ընթացքում աշխատում է նաև հարևան գյուղերում: Կոոպերատիվի նախագահ Երեմ Ասատրյանը միակ հիմնախնդիրը համարում է գյուղատնտեսական տեխնիկայի որոշ պահեստամասերի բացակայությունը: Դրանք պետք է հարմար լինեն քարքարոտ հողատարածքներում աշխատելու համար:

Գյուղն ունի որակյալ մեխանիզատորի կարիք: Տեխնիկայի ստացումից հետո թե՛ հողի մշակության, և թե՛ կերի կուտակման աշխատանքները կատարվում են ժամանակին և որակով, ինչի արդյունքում բարձրացել է նաև տնտեսությունների եկամտաբերությունը:



Կոոպերատիվի անդամները հողը մշակում են միասնական, ինչի արդյունքում ավելի են դյուրինացվում մշակության աշխատանքները, միաժամանակ փոքրանում են կատարվող ծախսերը: «Ստանում ենք սուբսիդավորված պարարտանյութ, դիզվառելիք, սերմացու, կարելի է ասել՝ մեր պահանջարկն ամբողջությամբ բավարարվում է: Կոոպերատիվն էլ հնարավորություն տվեց նորացնել տեխնիկայի հավաքակայանը, մտնում է աշխատել», - հավելում է գյուղապետ Կարապետ Ասատրյանը:

Գյուղի բնակչությունն էլ գոհ է այս նախաձեռնությունից, քանի որ գործնականում միայն դրական քայլեր են արվում:

ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆՊԱՏԱԿԸ ԱԶՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ԱՄԲՈՂՋ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄՆ Է

Ընթացիկ տարում «Մասիսի բերրիություն» ՍՊԸ-ը ՌԴ-ից, Վրաստանից և Իրանի Իսլամական Հանրապետությունից ներկրել է 27 հազար տոննա սուբսիդավորված ազոտական պարարտանյութ, որն ամբողջությամբ, ելնելով պահանջարկից, բաշխվել է հողագրագործողներին: Ընկերության տնօրեն Սասնիկ Պողոսյանի տեղեկացմամբ, նախատեսված է, մինչև նոյեմբեր, ընդհանուր առմամբ, հանրապետություն ներկրել 34 750 տոննա ազոտական սուբսիդավորված պարարտանյութ, որն ամբողջ տարվա պահանջարկն է: Ծրագրում ընդգրկված է նաև ԼՂՀ-ը:

Արդեն չորրորդ տարին է, ինչ ՀՀ կառավարության կողմից գյուղացուն հատկացվող սուբսիդավորված պարարտանյութը հանրապետություն է ներկրում «Մասիսի բերրիություն» ՍՊԸ-ն: Ազոտական պարարտանյութի այս տարվա առաջին խմբաքանակը բաշխվել է ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի, իսկ Իրանից ներկրվածը՝ Սյունիքի մարզի ֆերմերներին: «Սուբսիդավորված պարարտանյութի 50 կգ քաշ ունեցող մեկ պարկն արժե 6 հազար դրամ, որը մեր ընկերությունն իր ավտոմեքենաներով հասցնում է համայնքներին:

Նկատելի է, որ հանրապետությունում, մշակովի հողատարածքների ավելացմանը զուգընթաց, մեծանում է նաև պարարտանյութերի պահանջարկը: Համեմատության մեջ դնելով՝ նշենք, որ եթե 2012 թ. ազոտական պարարտանյութի նկատմամբ պահանջարկը 25 հազար տոննա էր, ապա այն այսօր գերազանցում է շուրջ 10 հազար տոննայով», - ասում է Սասնիկ Պողոսյանը: Ընկերությունն ունի մշտական 7 աշխատատեղ, սակայն սեզոնային աշխատանքների ընթացքում նրանց թիվն ավելանում է, քանի որ լրացուցիչ աշխատանքի են ընդունվում վարորդներ և բանվորներ:



Դեռևս 1996 թ.-ին սեփականաշնորհված այս ընկերությունը, անկախ դժվարություններից, հավատարիմ է մնում իր մասնագիտական կոչմանը, շարունակելով իր գործունեությունը գյուղատնտեսության զարգացման բարդ ու դժվարին գործում: Մասնագիտությամբ ինժեներ-մեխանիկ Սասուն Պողոսյանը անում է հնարավորը, որպեսզի ընկերությունը երբեք չփոխի իր դիմագիծը, գործունեության ոլորտը՝ հավատարիմ մնալով ավանդույթներին: «Դժվար իրավիճակի մեջ միշտ էլ ելք գտնում ես, կարևորը՝ ցանկությունն է», - ասում է կյանքի փորձով իմաստնացած տնօրենը: Պահպանվել է ընկերության տարածքում գործող երկաթգիծը, մասնագիտացված երկու պահեստները, որոնցից յուրաքանչյուրն ունի 3 500 մ² տարածք:

Հանրապետության տարբեր կազմակերպություններ ևս օգտվում են «Մասիսի բերրիություն» ծառայությունից, պահեստավորելով այնտեղ պարարտանյութ, սերմացու և այլն: Այստեղ պահպանվում են նաև «Հրաշք այգի» ընկերության ներկրած (դարձյալ պետության կողմից սուբսիդավորված) կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերը, որոնք, ըստ պահանջարկի, բաշխվում են հողագրագործողներին: Այս գործընթացը սկսվել է 2014 թ.-ից:

Ի դեպ, պրն Պողոսյանի տեղեկացմամբ, ընկերությունը ներկրում է նաև «Նիտրոամոֆոսկա» համալիր պարարտանյութը, որն իր մեջ ներառում է ազոտ, ֆոսֆոր և կալիում: Դրա հիմնական սպառողները ջերմոցային տնտեսությունները և խոշոր հողատերերն են: «Համալիր պարարտանյութը բարձրացնում է բույսի դիմադրողականությունը, բերքատվությունը, բարելավում է աճը: Պարզապես պետք է պահպանել պարարտացման ժամկետներն ու չափաբաժինները, ինչպես նաև՝ սպասման ժամկետները», - նշում է տնօրենը:

Բացի սուբսիդավորված պարարտանյութից, ընկերությունը ներկրում է ազոտական պարարտանյութ՝ ելնելով պահանջարկից, որը վաճառում է շուկայական գներով: Նպատակը մեկն է՝ բավարարել հանրապետության ազոտական պարարտանյութի ամբողջ պահանջարկը:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ


ԽԱՂՈՂԻ ՎԱՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խաղողի վազի տարածված և տնտեսական անձ վնաս հասցնող հիվանդություններից են՝ միլդիան, օիդիումը, անտրակնոզը, մոխրագույն փտումը, որոնց դեմ ժամանակին ու ճիշտ պայքար չգրանցելու դեպքում, զգալիորեն նվազում է բերքը, ընկնում որակը:

ՄԻԼԴԻՈՒ ԿԱՄ ԿԵՐԾ ԱՐԱՑՈՂ

Արարատյան հարթավայրում միլդիան հայտնի է «չող», հյուսիս-արևելքում՝ «կարմրուկ», այլ շրջաններում՝ նաև «խորշուկ» անուններով: Հիվանդության զարգացումը պայմանավորված է եղանակային պայմաններով և հաճախ սկսվում է արդեն մայիսի սկզբներին: Վարակվում են վազի կանաչ օրգանները: Տերևների վրա ի հայտ են գալիս դեղնավուն, կլոր բծեր, խոնավ եղանակին տերևի հակառակ մակերեսին, բծերին համապատասխան տեղերում, առաջանում է արանման (կեղտասպիտակավուն) փառ, որը սնկի սպորանգիոցներն է: Հետագայում տերևի վրայի բծերը ստանում են կարմրագորշավուն երանգ՝ այրվածքի նման:

Հիվանդության զարգացմանը հատկապես նպաստում են օդի բարձր հարաբերական խոնավությունը, տևական անձրևները:



Միլդիանով վարակված խաղողի տերևներ

Պայքարի միջոցառումները

Միլդիանի և խաղողի վազի մյուս հիվանդությունների դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ է վաղ գարնանը հեռացնել վարակված տերևներն ու շվերը, ժամանակին կատարել շվատում և բճատում, չոր և կանաչ կապ, համալիր պարարտացում: Քիմիական պայքարի առումով, առավել արդյունավետ են ֆունգիցիդներով նախազգուշական սրկումները, միլդիանի դեմ առաջին սրկումը հարկ է կատարել տևական անձրևներից հետո, երբ օդի միջին ջերմաստիճանը 10-12°C է:

Սրկման ժամկետն ընտրելիս, պետք է առաջնորդվել կողմնորոշվել վազի զարգացման փուլերով: Այսպես՝ առաջին սրկումը պետք է կատարել, երբ առաջացել են 3-5 իսկական տերևներ, երկրորդը՝ ծաղկումից առաջ, երրորդը՝ ծաղկումից հետո: Անհրաժեշտության դեպքում, սրկումները շարունակել 10-15 օր ընդմիջումներով: Առաջարկվում է Բորդոյան հեղուկի 1 %-անոց լուծույթ (10 լ ջրին՝ 100 գրամ չհանգած կիր + 100 գրամ պղնձարջասպ)՝ Կիր և պղնձարջասպը պատրաստվում են առանձին՝ ոչ մետաղյա տարաներում, ապա պղնձարջասպը ցվում է կրաջրի վրա, Ռիդոմիլ գուլդ 68ի 0,25 % (10 լիտր ջրին՝ 25 գրամ), Ռիդոմիլ գուլդ պլյուս 4-5 կգ/հա, Ռեվուս տոպ 500 ԽԿ՝ 0,5-0,6 կգ/հա, Կուպրոկ-սատի 0,5 % (10 լիտր ջրին՝ 50 գրամ) պատրաստումներով: Ցանկալի և արդյունավետ է վերը նշված պատրաստումների փոխմիջոցառումները:

ՕԻԴԻՈՒՄ ԿԱՄ ԻՍԿԱԿԱՆ ԱՐԱՑՈՂ

Արարատյան հարթավայրում անվանում են «սև», հյուսիս-արևելքում՝ «թոզ»: Տարածված է խաղողագործական բոլոր շրջաններում. զարգացումը սկսվում է, սովորաբար, մայիսի կեսերին: Տերևների վրա առաջանում են փոքր, կլոր բծեր, որոնք պատված են սպիտակ, ալյուրանման փառով: Շվերը կարող են վարակվել մինչև վազի ծաղկելը, վարակը տարածվում է ծաղկավիթերով:

յունների, տերևների ու պտուղների վրա: Վաղ վարակի դեպքում պտուղները դադարում են աճել, չորանում և ընկնում են, ուշ վարակվելիս՝ պտուղը պատվում է սպիտակամոխրագույն փառով, պատռվում է, վարակը կարող է հասնել մինչև սերմերը, իսկ խոնավ եղանակին այդպիսի պտուղներն արագ փտում են:



Օիդիումով վարակված խաղողի ողկույզներ

Պայքարի միջոցառումները

Քանի որ հիվանդությունը ծմռում է վարակված շվերում՝ շատ արդյունավետ է վարակված շվերը հեռացնելն ու ոչնչացնելը: Արդյունավետ են ծծմբային պատրաստումները՝ աղացած ծծումբ, հեկտարին՝ 25-30 կգ, կոլիդ ծծմբով՝ 9-10 կգ/հեկտարին (1%-անոց կախույթով): Բարձր արդյունավետություն են ցուցաբերում Բայետոնով կամ Տոպագոլ՝ հեկտարին 250-300 գրամ/մլ, սրկումները (ծեռքի սրկիչներով սրկելիս, 5 գրամ՝ 10 լ ջրին), Կվադրիս մաքս 533,5 ԽԿ (արդյունավետ է միլդիանի, օիդիումի, մոխրագույն փտման դեմ)՝ 1,5-2 կգ/հա, Եմբելիա 140 ԽԿ՝ 1,2-1,5 լ/հա:

Ճիշտ և արդյունավետ է առաջին սրկումը կատարել բողբոջների ուռչման փուլում, երկրորդը՝ ծաղկումից առաջ, երրորդը՝ ծաղկումից հետո, անհրաժեշտության դեպքում՝ 14-15 օր ընդմիջումներով կատարել հաջորդ սրկումները:

Սրկումները հարկ է դադարեցնել բերքահավաքից առնվազն 20-25 օր առաջ: Օիդիումի զարգացմանը նպաստում է միակողմանի կամ նորմայից ավելի ազդեցական պարարտացումը:

ՄՈՆԻՐԱԳՈՒՅՆ ՓՏՈՒՄ

Հիվանդությունն ուժեղ է զարգանում հատկապես տևական անձրևներից հետո: Վարակվում են միայն պտուղները, որոնք պատվում են մոխրագույն փառով, ունեն անդուր համ: Վաղ վարակի դեպքում՝ պտուղները կարող են լրիվ չորանալ, փչանալ: Հիվանդությանը նպաստում է վնասատուներով, հատկապես՝ ողկուղակներով վարակվելը:

Պայքարի միջոցառումները.

Արդյունավետ են Ֆդագոլի 0,2, Ռավոլի 0,15,



Մոխրագույն փտումով վարակված խաղողի ողկույզներ

Բայետոնի և Տոպագի 0.05 %-անոց լուծույթներով սրկումները: Առաջին սրկումը ծաղկումից առաջ, երկրորդը՝ պտուղների կազմակերպման սկզբում, հետագայում՝ 15-18 օր ընդմիջումներով: Ժամանակին ու ճիշտ պայքար տանել վնասատուների, հատկապես՝ ողկույզակերի դեմ:

ԽԱՂՈՂԻ ԱՆՏՐԱԿՆՈՂ

Հիվանդությունը տարածված է խաղողագործական բոլոր շրջաններում, սովորաբար՝ օջախներով: Հանրապետությունում այն հատկապես մեծ վնաս է պատճառում Տավուշի մարզում:

Անտրակնոզը մեծ վնաս է հասցնում հատկապես այն տարածքներում, որտեղ օդի բավարար հարաբերական խոնավությունը զուգակցվում է բարձր ջերմաստիճանի հետ: Հիվանդության հարուցիչը սունկն է: Այս հիվանդությանը վարակվում են վազի բոլոր կանաչ օրգանները՝ շվերը, պտուղները, տերևները, տերևակոթերը: Ամենից շատ հիվանդությունն արտահայտվում է տերևների վրա, ըստ որում՝ դրանց առաջանալուց անմիջապես հետո, սկզբում՝ հազիվ նկատելի բաց դարչնագույն կետերի, բծերի տեսքով: Հետագայում բծերը մեծանալով՝ դառնում են գորշավուն՝ մուգ մանուշակագույն երիզով, որից հետո, հիվանդ հյուսվածքը թափվում, ընկնում է, իսկ տերևը՝ ծակծկվում: Տերևակոթոնների, ինչպես նաև տերևի ջղերի վրա, բծերն ընդունում են խոցերի տեսք: Վարակի ուժեղ արտահայտման դեպքում, տերևները կարող են նույնիսկ թափվել:

Պտուղների վրա բծերը թեթևակի սեղմված են, ներս ընկած, կլորավուն, սկզբում՝ մուգ մանուշակագույն, պարփակված մանուշակագույն երիզով: Շատ վտանգավոր է շվերի վարակվելը: Սկզբում առաջանում են ոչ մեծ, գորշ բծեր, որոնք շվերի աճելու, մեծանալու հետ ձգվում, խորանում են՝ ընդունելով ձգված խոցերի տեսք: Հետագայում բծերն ընդունում են սուրճի գույն, որը մանուշակագույն երիզ ունի: Խոցերի եզրերն անհավասար են: Ուժեղ վարակի առկայության դեպքում, խոցերը միանում, ծուլվում են՝ օղակաձև ընդգրկելով շվերը: Այդպիսի շվերը տձև են և կոտրվող:



Անտրակնոզով վարակված խաղողի տերևներ և ողկույզներ

Պայքարի միջոցառումները

Աշնանը կտրել, հեռացնել անտրակնոզով վարակված շվերը, մաքրել այգիները թափված տերևներից, չորացած պտուղներից, ճյուղերից (մատերից):

Ժամանակին կատարել չոր և կանաչ կապը, ծերատումը, բճատումը:

Կատարել նախազգուշական սրկումներ այն ֆունգիցիդներով, որոնք առաջարկվում են միլդիանի դեմ՝ Բորդոյան հեղուկ՝ 1%անոց, Կուպրոկսատ՝ 5 կգ/հա, Անտրակոլ՝ 2 կգ/հա, պոլիխոմ՝ 6 կգ/հա, պղնձի օքսիդիդը՝ 6կգ/հա, Ռիդոմիլ գուլդ 68՝ 2.5 կգ/հա և մյուս պատրաստումները, որոնք կիրառվում են միլդիանի դեմ:

Շատ կարևոր, որոշիչ նշանակություն ունի սրկման ժամկետը: Առաջին սրկումը հարկ է կատարել առաջին տերևների հայտնվելուն պես (կարելի է համատեղել տրիպանների դեմ կատարվող սրկման հետ): Երկրորդ սրկումը կատարել ծաղկումից առաջ, երրորդը՝ ծաղկումից անմիջապես հետո:

Ալֆրեդ Գրիգորյան
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վարչերիկ Գյուլամիրյանը ծնվել է 1966 թ., Արարատի շրջանի Բաղրաշեն գյուղում: Ավարտելով Բաղրաշենի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական հնարիտուր, ստացել անասնաբույժ-ինժեներ մասնագետի որակավորում: 1987-1993 թթ. աշխատանքի է անցել Արարատի տնտեսական թոչնաբուժական ֆարմիայում՝ որպես բրիգադիր, կոնստրուկտոր: 2000-2008 թթ. Արարատի գազի գրասենյակի մասնաճյուղում:

1928 թվականին հիմնադրված Քաղցրաշեն գյուղը, որը նախկինում կոչվել է Չորրորդ գյուղ՝ առաջին բնակիչներին ընդունել է Վանից, Շատախից, Խոյ և Սալմաստ Գավառներից, ինչպես նաև Մարտունու շրջանից:



3000-ից ավելի բնակչություն ունեցող Քաղցրաշեն համայնքում այսօր հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Շուրջ 150 ընտանիքներ ունեն սառնարանային տնտեսություններ, որտեղ պահպանված բերքն ու բարիքը վաճառվում է Հայաստանում, ինչպես նաև արտահանվում Ռուսաստանի Դաշնություն: Վ. Գյուլամիրյանն ընտրվելով Քաղցրաշեն համայնքի ղեկավար՝ մեծածավալ աշխատանքներ է իրականացրել: Համայնքում ծառայած խնդիրների, ձեռք բերած հաջողությունների և առաջիկա աշխատանքների մասին զրուցեցինք համայնքի ղեկավարի հետ:

-Պարոն Գյուլամիրյան, ղեկավարելով համայնքը, ի՞նչ կարևոր աշխատանքներ են կատարվել:

-Համայնքի ղեկավար ընտրվել եմ 2008 թ.-ին, վերընտրվել՝ 2012թ.-ին: Այդ ժամանակահատվածում կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ՝ Արտաշատի ջրանցքի կամրջի վերանորոգում, լուծվել են ռոտոման, խմելու ջրերի խնդիրները, իրականացվել է մշակույթի տան մասնակի վերանորոգում է, (երաժշտական դպրոց, մարզադահլիճ, խաղասենյակ), ապա կատարվել են ջեռուցման անցկացում, մանկապարտեզի տանիքի վերանորոգում և գազաֆիկացում, միջնակարգ դպրոցի դռների և պատուհանների փոխարինում և լուկալ ջեռուցման անցկացում, դպրոցի ճաշարանի և սանհանգույցների վերանորոգում, կառուցվել է նոր բուժամբուլատորիա, Ներսիսյան, Սունդուկյան և Իսահակյան փողոցները գազաֆիկացվել են, Արևիկյան, Շահումյան և Դուրյան փողոցներում լուսավորության հարցն է լուծվել: 2011թ.-ին սկսել ենք եկեղեցու կառուցման աշխատանքները: Համայնքում տեղադրվել են երկու հակակարկտային կայաններ:

- Համայնքում ծառայած հրատապ լուծում պահանջող ինչպիսի՞ խնդիրներ կան:

- Բնականաբար, համայնքում առաջնային խնդիրներ կան, հրատապ խնդիրներից են՝ դպրոց տանող ճանապարհի՝ Շահումյան փողոցի ասֆալտապատումը, մանկապարտեզի հիմնանորոգումը և ջեռուցումը:

- Բնակչության ազատ ժամանակն ինչպե՞ս է կազմակերպվում /կրթություն, մարզամշակութային կյանք:

-Համայնքում գործում է դպրոց, մագադապրոց, երաժշտական դպրոց, մանկապարտեզ: Գյուղապետարանի աշխատակազմը, մանկավարժական կոլեկտիվները հնարավորինս ամեն ինչ անում են՝ երեխաների, նաև մեծահասակների ազատ ժամանակը ճիշտ և նպատակային կազմակերպելու ուղղությամբ: Նրանք մշտապես մասնակցում են համայնքում, մարզում, հանրապետությունում կազմակերպված միջոցառումներին, տոնակատարություններին, առաջնություններին:

-Առաջիկայում համայնքի ղեկավարի ընտրություններն են, ի՞նչ աշխատանքներ կան, որոնք պետք է ավարտին հասցնել:

-Վերը նշված հիմնախնդիրներից բացի, պետք է ավարտենք եկեղեցու շինարարությունը, Հայրենական մեծ պատերազմի հուշարձանի և եկեղեցու տարածքի բարեկարգումը:

Քաղցրաշեն համայնքի բնակչությունը մինչ օրս չի մոռացել և հպարտությամբ է հիշում «Ասան» կամավոր մարզական ընկերության կողմից հանդես եկող ֆուտբոլի թիմի ՍՍՀՄ առաջնությունում առաջին տեղը գրավելու բերկրանքը: Առավել ուշագրավ է, ազատ ոճի ըմբիշներ՝ աշխարհի եռակի չեմպիոն Ա. Գևորգյանի, Եվրոպայի չեմպիոններ Ն. Գևորգյանի և Ռ. Մարգարյանի հաջողությունները: Հուսանք, որ նմանատիպ հաջողություններ համայնքի պատանիների, երիտասարդների շրջանում նորից կլինեն:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԲՐՈԿՈԼԻ

Բրոկոլի (լատ.՝ Brassica oleracea կամ լատ.՝ Brassica silvestris) կաղամբազգիների ընտանիքի միակից բանջարեղենային բույս է բանջարանոցային կաղամբի ենթաբույս:

Ծաղկակաղամբի գենետիկական նախորդն է: Կաղամբի այս տարատեսակի մոտ ուտելի են ոչ թե տերևները, այլ չբացված ծաղկաբույլը: Համաձայն վերջին տվյալների՝ կաղամբի այս տեսակը ստացվել է հիբրիդիզացիայի ճանապարհով՝ մ.թ.ա. 6-5-րդ դարերում՝ միջերկրածովյան հյուսիս-արևմուտքում:

Հարյուրամյակներ շարունակ ծնեբեկային կաղամբը Իտալիայի սահմաններից դուրս հայտնի չի եղել: Իտալական broccoli բառը broccolo բառի հոգնակի ձևն է, որը նշանակում է կաղամբի ծաղկող ցողուն: ԱՄՆ-ում բրոկոլիի մասին իմացել են միայն 20-րդ դարի սկզբին, իսկ Ռուսաստանում՝ էլ ավելի ուշ: 2011 թվականի տվյալներով Չինաստանն ու Հնդկաստանը հավաքում են համապատասխանաբար այս բանջարեղենի համաշխարհային մակարդակի 43 % և 32 %-ը:

Հայտնի են բրոկոլիի երեք տեսակներ՝ դասական կամ կալաբրիական, կարմիր (տեսքով հիշեցնում է ծաղկակաղամբը) և ցողունավոր, մանր առանձնացված ծաղկաբույլերով: 21-րդ դարում մշակվեց նաև «Բենեֆորտե» տեսակը, որը պարունակում է երեք անգամ ավելի գլյուկոռաֆանին, քան՝ սովորական բրոկոլին:

Ցողունը հենց առաջին տարում հասնում է 60—90 սմ բարձրության՝ գագաթին առաջացնելով բազմաթիվ հյութալի ճյուղեր (ծաղկակիրներ), որոնք ավարտվում են խիտ կանաչ, մանր կոկոնների խմբերով: Նրանք միասին հավաքված են ոչ մեծ նոսր գլխիկում, որը կտրում են օգտագործման համար՝ չսպասելով, որ կոկոնները ծաղկեն և դեղին ծաղիկներ տան: Ամենից լավ բրոկոլին աճում է սառը խոնավ կլիմայում՝ 18-ից 23 °C պայմաններում: Բերքը հավաքում են, երբ գլխիկի պարագիծը հասնում է

10—17 սմ-ի: Եթե այն կտրում են հարակից բողբոջներից հաճախ զարգանում են նորերը, հետևաբար բրոկոլին երբեմն «բերք է տալիս» մի քանի ամիս շարունակ, փափուկ կլիմայի պայմաններում, նույնիսկ՝ ձմռանը: Երբ բողբոջները ստանում են վառ դեղին երանգ, դա խոսում է այն բանի մասին, որ կաղամբը շատ է հասունացել և պիտանի չէ օգտագործման համար:



Բրոկոլին ամենաառողջարար բանջարեղեններից մեկն է: Դրա առողջարար հատկանիշներն անսահման են, այն պարունակում է հսկայական քանակությամբ վիտամին E, A և C հակաօքսիդանտներ, մագնեզիում և կալցիում: Ընդամենը 30 գրամ բրոկոլիի տերևները պարունակում են օրական պահանջված վիտամին A-ի 90 %-ը, որը շատ կարևոր է տեսողությունն ու դիմադրողականությունն ամրացնելու համար: Բացի այդ, այն պարունակում է նաև վիտամին C-ի օրական չափաքանակը: Քաղցկեղի կանխարգելման գործընթացում այս վիտամինն օգտակար է: Փորձեք եփել տերևները բրոկոլիի հետ:

Բրոկոլին պարունակում է բջջանյութ, կալիում,

ֆոսֆոր, մագնեզիում, երկաթ, ցինկ, մանգան, ծծումբ, վիտամիններ՝ C, B1, B2, B5, B6, PP, E, K և պրովիտամին A: Բրոկոլին նաև օրգանիզմը հարստացնում է վիտամիններ PP, U և բետա-կարոտինով: Այն նաև լի է հանքային աղերով և սպիտակուցներով: Այս ամենի հետ մեկտեղ, այս մթերքը բավականին քիչ կալորիականություն ունի՝ ընդամենը 34 կալորիա՝ 100 գրամում: Այն նաև հագեցնում է ախորժակը. ունի նաև մեկ այլ առավելություն՝ շատ արագ է պատրաստվում: Պետք է հիշել, որ բրոկոլին չի կարելի երկար եփել, քանի որ այն պետք է պահպանի իր գեղեցիկ կանաչ գունավորումն ու մի քիչ խրթխրթան լինի:

Գիտնականները նոր ծրագիր են առաջարկել, որով ցանկանում են պարզել բրոկոլի արդյունավետությունը՝ օստեոարթրիտի դեմ պայքարում: Նախնական փորձերը, որոնք անցկացվել էին Արևելյան Անգլիայի համալսարանում, բրոկոլիի մեջ հայտնաբերել են սուլֆորաֆան անվանումով միացություն: Այն արգելափակում է էնզիմները, որոնք ոչնչացնում են հողերը օստեոարթրիտի ժամանակ:

Ի դեպ, ավելի վաղ բրոկոլիին վերագրում էին նաև հակաքաղցկեղային հատկություններ: Սակայն այս հետազոտությունն առաջին անգամ կապում է բրոկոլին հողերի հետ: Գիտնականները պատրաստվում են բացահայտել, թե ինչպես է ազդում սուլֆորաֆանը, որպեսզի դանդաղեցնեն կամ կանխարգելեն օստեոարթրիտի զարգացումը: Ուսումնասիրությունն առաջին քայլը կլինի հետազոտությունները համար: Սննդի մեջ բրոկոլի կանոնավոր օգտագործումը բավարար է, որպեսզի ասպիտիկ սուլֆորաֆանի բարձր մակարդակն արյան մեջ, սակայն գիտնականները պետք է բացահայտեն՝ արդյո՞ք այդ քանակը բավարար է բուժման համար:

Լիլիթ Գասպարյան

ՀԵՏԱԲՈՒԹՅՈՒՆ Է...

ԿՈՐՆԳԱՆ ՑԱՆՔԱՅԻՆ

Կորնգանը (Onobrychis Adonis) բակլագգինների ընտանիքի բազմամյա, խոտաբույս է կամ թուփ: Լայնաբերուն գիտական անվանումը ծագում է հունարեն «onos»՝ ավանակ և «brich»՝ կրծուրել բառերից: Ռուսերեն անվանումն է «эносарлем»: Կորնգանների ցեղն ընդգրկում է մոտ 130 վայրի ենթատեսակներ: Մշակության մեջ հանդիպում է 3 տեսակ՝ կորնգան ավազային, որն առաջին անգամ սկսել են մշակել 19-րդ դարում՝ Ուկրաինայում, կորնգան սովորական, նույնն է՝ ցանովի կամ միահար, որը 16-րդ դարից մշակվում է Եվրոպայում և Կորնգան այսրկովկասյան կամ երկհար, որը մշակվում է 11-րդ դարից: Ենթադրվում է, որ այս տեսակը սրացվել է երկու վայրի տեսակների խաչաձևման եղանակով:

որոնք դադարեցնում են ակտիվ աճը միայն ուշ աշնանը, երբ օրական միջին ջերմաստիճանը նվազում է մինչև 5°C-ով: Կորնգանի բոլոր տեսակների արմատներն առանցքային են՝ 2-3 մ, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 10 մ խորությամբ, որի շնորհիվ բույսն օգտագործում է բնահողի ստորին շերտերի խոնավությունն ու բույսի աճը խթանող հանքանյութերը: Օգտակար նյութերը կուտակվում են արմատավզիկում և ընձյուղների ստորին մասում: Բույսի կյանքի առաջին տարում արմատավզիկը գտնվում է հողի մեջ՝ մակերեսից 3 սմ ցածր, որի շնորհիվ պաշտպանված է կլիմայական ու մեխանիկական անբարենպաստ ազդեցությունից:

մեղրները 15-20 օր կարող են հավաքել ծաղկափոշին ու ծաղկախյուղը: Նեկտարաբեր օղա-

կշիռը ցածր է, գույնը՝ բաց կանաչավուն, թափանցիկ: Բյուրեղացման ընթացքը շատ դանդաղ է, բյուրեղանալուց հետո մեղրը ստանում է ճերմակ,

րով, պարունակում է բազմաթիվ խմորիչներ, կենսաբանորեն ակտիվ նյութեր: Բարձր ֆերմենտատիվ ակտիվության շնորհիվ, որի հետևանքով ակտիվանում են մարդու օրգանիզմի փոխանակման գործընթացները, կորնգանի մեղրը կիրառվում է մի շարք հիվանդությունների կանխարգելման ու բուժման ժամանակ: Մեղրը հանգստացնում է նյարդային համակարգը, ամրացնում է արյունատար մազանոթները, ունի քրտնամուղ ու միզամուղ հատկություն:

Կորնգանի խոտը պարունակում է 9.6 % ածխաջրեր, 4.4 % սպիտակուցներ, 1.5 % ճարպեր, 5.4 % բջջանք, 4.6% ազոտային նյութեր և մի շարք խմորիչներ: Կորնգանի 100 գ խոտը պարունակում է ասկորբինաթթու, կարոտին, K, E վիտամիններ:

Բուժիչ նպատակներով օգտագործելու համար, ցողունն ու տերևը պետք է հավաքել, ծաղկման շրջանում, իսկ արմատն՝ աշնանը: Չորացրեք օդափոխվող տարածքում, 25-30 °C ջերմաստիճանի պայմաններում:



կաձև գեղձը գտնվում է ծաղկի հատակում՝ սերմնարանի շուրջը: Պտուղը պոճոկավոր է, շագանակագույն երանգի, կլորավուն, հաճախ՝ փշոտ, չի ճաքում, հասունանալուց հետո հեշտությամբ անջատվում ու տարածվում է: Պտուղները շատ մանր են՝ 100 հատ պտղի քաշը 2-3 գ է, յուրաքանչյուրը պարունակում է 1-ական հարթ, լոբու նման, գորշ, դեղնականաչավուն սերմ: Կորնգանի բոլոր տեսակները կարող են մշակվել նույնիսկ քարքարոտ ու ցանկացած այլ տեսակի հողերում: Բույսը սիդերատ է՝ պարարտացնում է այն հողը, որտեղ աճում է:

կաթնագույն երանգ: Կորնգանի բնական մեղրն ունի յուրահատուկ բարեբար ազդեցություն մարդու օրգանիզմի վրա: Այն հարուստ է վիտամիններով, միկրո- ու մակրոտարրե-

Ըստ որոշ տվյալների՝ կորնգանի բուսաճական «ծրագիրն» այնպիսին է, որ արմատային համակարգը փխրեցնում է հողը, որպեսզի հեշտացնի օդի, ջրի և այլ անհրաժեշտ օգտակար նյութերի ներթափանցումը բնահողի խորքային շերտերը:

Արմատային համակարգն առավել ակտիվ է զարգանում բույսի կյանքի առաջին ամսում: Ծիլերի դուրս գալուց 20 օր անց, արմատի երկարությունը 3-4 անգամ ավելի է, քան՝ բույսի բարձրությունը: Կորնգան ավազայինի ծիլերը ձևավորվում են թփերին բնորոշ բուսաճական եղանակով: Բույսն ունի ծաղկակիր, վեգետատիվ կարճ ու վեգետատիվ երկար ցողուններ, որոնց վրա ձևավորվում են ստորին տերևավարդակն ու տերևակիր ճյուղերը:

Յուրաքանչյուր տերևի ծոցում կան «քնած» բողբոջներ ու, եթե ճյուղիկը կտրվում է, ապա մյուսների բողբոջի վերին անկյուններից հաճախ աճում են նոր, ակտիվ զարգացող 1 կամ մի քանի ճյուղեր: Սակայն, նման զարգացում կարող են տեղի ունենալ նաև չվսասված ցողունի տերևածոցերից: Կորնգանը սկսում է ծաղկել առաջին ծիլերի դուրս գալուց 60-65 օր անց, իսկ սերմերը հասունանում են 110-120 օր հետո: Ծաղիկները ծիրանագույն կամ կարմրավարդագույն են, ունեն թիթեռնածաղկավորների ենթաընտանիքին (Papilionaceae) բնորոշ կառուցվածք: Ծաղկաբույլը կոնաձև է՝ բաղկացած 60-70 ծաղիկներից, որի երկարությունը մինչև 20 սմ է: Ծաղիկն ունի անզուգական թմրեցնող բուրմունք: Խաչաձև փոշոտվող բույսեր են,

ԿՈՐՆԳԱՆԻ ՄԵՂՐԻ ԲՈՒԺԻՉ ՀԱՅՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կորնգանի մեղրը հարգի է ու մեծ պահանջարկ ունի ԱՄՆ-ում, Գերմանիայում, Եվրոպական այլ երկրներում, վերջին տարիներին նաև՝ Չինաստանում: Հայ գիտնականների վերջերս կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ հողահանդակային մեղրատու բույսերի 1 հա մոտավոր մեղրաբերքի քանակական տվյալները, ՀՀ կլիմայական պայմաններում, առավել բարձր են կորնգանի՝ 680, եղեսպակի՝ 650, առվույտի՝ 400, իշառվույտի՝ 250, երեքնուկ վարդագույնի՝ 150, սպիտակ երեքնուկի՝ 100 կգ-ի մեղրատվությունը: Կորնգանի մեղրը դասվում է ամենաորակյալների շարքին, ունի թույլ արտահայտված վարդի բուրմունք: Նախնական շրջանում կորնգանի մեղրի տեսակարար

Ներկայում առավել լայն տարածում ունի կորնգան ավազայինը, որը մշակվում է Բայկալից մինչև Ատլանտյան օվկիանոս, նաև Միջերկրական ծովից մինչև Ականդինավյան թերակղզի ընկած տարածքներում: Արտադրական ծավալներով առաջատար երկրներն են Իտալիան և Կանադան: Կորնգանը մշակում են որպես սպիտակուցներով հարուստ անասնակեր ու մեղրատու բույս: Ի տարբերություն, օրինակ՝ առվույտի, կորնգանն ավելի դյուրամարս է: Խոտի բերքը հավաքում են ծաղկման փուլում, իսկ սերմինը՝ 70 % հասունացման ժամանակ: Մեր հանրապետությունում բույսը հանդիպում է նախալեռնային ու լեռնային գոտիներում:

ԿՈՐՆԳԱՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Առավել վաղահաս է կորնգան սովորականը, նույնն է՝ ցանովին, որի ուղղաձիգ ցողունի բարձրությունը հասնում է 90 սմ: Կորնգան այսրկովկասյանը ծաղկում է 6-7 օր ուշ, քան՝ ցանովին, որի ցողունները հաճախ սնամեջ են՝ մինչև 150 սմ բարձրությամբ: Կանաչ զանգվածի բերքատվությամբ գերազանցում է կորնգան ավազայինին, աչքի է ընկնում բարձր երաշտադիմացկունությամբ: Կորնգան ավազայինը ծաղկում է 10-12 օր ուշ, քան՝ ցանովին, ցողունի բարձրությունը մինչև 125 սմ է: Կորնգանի բոլոր տեսակները ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն, լուսասեր բույսեր են,

ՀԱՅՏԱՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարգելի քաղաքացիներ, Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք գանգահարել 011 23 14 30 հեռախոսահամարով:



Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աշակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:

ԸՆԴՀԱՆՍՈՒՐ ԵՒ 2016 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐԱԼՐԱՏՈՒԹՅՈՒՆ» թերթ	«ԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
1 համարի գինը՝ 120 դրամ	1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ	6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ	1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝

- Գյուղատնտեսության աշակցության հանրապետական և մարզային կենտրոնները
- «Դաշինք», «Դաշնամուլ», «Պրես-Ատտաշե» կազմակերպությունները

ԱԳՐԱԼՐԱՏՈՒԹՅՈՒՆ
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության (նախարարություն) «Գյուղատնտեսության աշակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն **Ա. ՎԱՀԱՆՅԱՆ**
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ **Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ**
Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ գրանցման թիվ՝ 01 ՄՕ00226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 38
ստորագրված է տպագրության 24.05.2016 թ. տպագրվում է ԳԱՀԿ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա